## 2027-2029թթ. ՄԺԾԾ և ՀՀ 2027թ. պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում

Մարտի 31-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում տեղի ունեցավ հանրային քննարկում մարզպետի աշխատակազմի կողմից կազմված <<Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման>> 2027-2029թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի /ՄԺԾԾ/ , ներառյալ 2027թ. պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ:

Հանրային քննարկմանը մասնակցում էին մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանը, ֆինանսական վարչության պետ, փորձագետ Գվիտոն Դավթյանը, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների անդամներ:

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը շնորհակալություն հայտնեց քաղաքացիական հասարակական կազմակերպությունների անդամներին հանրային քննարկմանը մասնակցելու պատրաստակամության համար, ապա նշեց, որ ընթացակարգի համաձայն՝ անհրաժեշտ է ապահովել համապատասխան քննարկում՝ կարևորելով հրապարակայնության և հաշվետվողականության, ինչպես նաև հանրային հատվածի ներգրավվածության ապահովման սկզբունքները:

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ, փորձագետ Գվիտոն Դավթյանը հանգամանալից ներկայացրեց 2027թ. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման և հաշվարկ-հիմնավորումների, ինչպես նաև 2027-2029 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

Այնուհետև ծավալվեց քննարկում. մասնակիցները բյուջետային հայտերի վերաբերյալ զեկուցողին ուղղեցին հարցեր նախատեսված ծախսերի ուղղությունների և հիմնավորումների վերաբերյալ , ստացան համապատասխան պարզաբանումներ: